և Հովհաննես Կարապետ. այստեղ մերկ սրունքներով չէ և մորթենի հագած, ինչպես Մկրտչի տիպերի մեջ, բայց ճակատի յերեք փնջիկ մազերով, մորուքով և գեմքի արտահայտությամբ ասկետի կերպարանք ունի. հագել և յերկար պարեգոտ, ուսերին ձգած վերնանդգեստ։ Տարբաղդաբար պատկերը տալ չենք կարող, փչացած լինելով ճանապարհին։

Այս խմբաքանդակի մասն եյին կազմում ամենայն հավանականությամբ յերկու ծայրերում Պողոս և Պետրոս առաքյալները, վորոնցից առաջնի պատկերը (պատկ. 101) տալիս ենք այստեղ, թեև վատ պահված և կեղտոտված. նոքա յել քանդակված եյին մի մի քարի վրա, միայն ավելի փոքր և առանց զարդարանքների, բայց դարձյալ կեղծ սյուների վրա հաստատված կամարի տակ, միայն ավելի փոքր, տեղի պակասության պատճառով։ Մեզ թվում է, թե այդ հինգ քանդակները բեմի ճակատն եյին կազմում։

Դ.

ՊՈՌՇՅԱՆՔ ԺԵ. ԴԱՐՈՒՄ.

ԺԴ. դարու կեսերին՝ հանդչում և մոնղոլ իլխանների հզոր պետությունը Պարսկաստանում՝ Թավրիզ մայրաքաղաքով. Աբու-Սեյիդ (1315—1335), մեր հիշատակարանների մեջ հաճախ Պուսաիդ կոչված, վերջին իշխանն եր, վորի ժամանակ պահվում եր պետության միությունը, թեև վոչ առանց հուզումների։ Նրա մահվանից հետո պետությունը յուր կարճատև հոգևարքն եր ապրում, հյուծված մոնղոլ զորապետների յերկպառակությամբ և խաղալիք դարձած յերկու հակառակորդ մեծ և փոքր Հասանների ձեռքում, առաջինը Ջելայիրյան ցեղից եր, իսկ յերկրորդը Աբու-Սայիդի վեզիր Զորանի թոռը՝ Տամուրտաշի վորդին *։

Թաթարների մահմեդականությունն ընդունելուց հետո արդեն դեպի վատն եր թեքվել Հայոց վիճակը. հիշատակարանները՝ միակ աղբյուրը ժամանակի հայ պատմության համար, հուզմամբ են պատմում թաթարների հարկապահանջությունը. «յամենայն քրիստոնէից վասն հաւատոցն», կապույտ նշան կարել տալը «ի վերայ թիկանց հաւատացելոցս». հարկահավաքության պատրվակով կողոպտում են վանքերը, հալածում կրոնավորներին **։ Բայց մոնղոլների անկման հետևյալ տասնամյակի դժբաղդությունները յերբեք կարելի չէ համեմատել սրա հետ. անիշխանությունը, հափշտակությունը, սովը հասնում են գերագույն աստիճանի. «ի թագաւորութեն զոր ոչ գոյ. այլ բարձեալ է թագաւորութի. քանզի իշխանք են խռովարարք և տատանեալք, ի վերայ միմեանց աղմկեալք, զոր ոչ կարէ բերան պատմել, զոր յայսմ ամի տեսին աչք մեր զաղէտ տարակուսանաց, զորս էրեսուն հազար մարդազէմ գազանաց ի վերայ երկրիս մերում յարձակեալք վնետս սրեալ և զաղեղն լարեալ և զթիւրս (զթիւնս) իւրեանց թափեալ, յարեան ի վերայ երկրիս մերում.... քանզի բազում զաւառս գերեցին և աւերելով կործանեցին, և զինչս արդիւնեաց (s!) զամենայնն յափշտակեցին և զամենեսեան զքրիստոնեայք կողոպուտ արարին, մերկ և բոկ և ոչ թողին ոչ մի ինչ ի վերա անձանց քրիստոնէից, այլ զանասունս տաւարաց ջոկս ջոկս առեալ տարան, զոչխարաց և զեզանց, զկովուց և զցլուց, զիշուց և զերիվարաց, զհանդերձս ի յանձնէ մերկացուցին... որ յերէկ տան տանուտէր և ամենայն իրաւք լի, և այսաւր.... մերկ ի վերա մոխրոյ նստեալ». լի յերկիրը աղքատացավ մինչ այն աստիճան, վոր շները սովից սատկում եյին։ Հիշատակարանի հեղինակը խոսում և միայն յուր գավառի մասին, բայց պատկերն ընդհանուր եր. մարդկային կարողությունից վեր եր տանելու այնպիսի մեծ նեղություն. կենդանի մնացածները յերանի եյին տալիս մեռածներին, վոր ազատ են «յայսմ տանջանաց» *

Այս շրջանին և վերաբերում հավանորեն նաև մի անթվական հիշատակարան, գրված Թեղենյաց վանքում, Դավիթ գրչի ձեռքով, «ի ժամանակիս խառնիճաղանճ ազգիս նեռազայ.... ով ոք կարէ պատմել զաղէտս տարակուսանաց, որ ոչ աշխարհ և ոչ քաղաք և ոչ ագարակ և ոչ սրբայկրաւն (s!) վանորայք զխաղաղութի գտեալ, այլ համակ ի նեղութիս և ի խիստ հարկապահանջողաց աւերեալ լինէր աշխարհս. քան[զի] ոչ զոյր թագաւոր և ոչ իշխան և ոչ այցելու, այլ յամենայն կողմանց խռովութի և աղմուկ» **։ Պակասը լրացնում է սովը, վոր հազվագեպ չեր այս շրջանի համար ***։

Այս վիճակը շարունակվում է ավելի քան մի ամբողջ դար. յերկու Հասաններից փոքրը և նորա յեղ-

* A. Müller. Der Islam im Morgen u Abendland. II. Berlin. 1887. 265. Стэнли Лэн-Пуль. Мусулм. Династ. 182. *Սամուէլ Անեցի. շար. 158։*

** *Ազգ. Հանդէս. ԺԲ. 164։ Փիրղալէմեան. Նշխար Հայոց պատմութեան. անտիպ։ Այս աղբյուրները գրված են 1318 և 1330 թ. թ.։ Կան և ուրիշները։*

* *Արարատ. 1915. Վերին Ազուլիսի և շրջակայքի հայերէն ձեռագրերը. Մեսրոպ վ. Մաղասուղեանի։ Նաև Ձեռ. էջմ. № 1009 Ն. Ց.*

** *Ձեռ. էջմ. 4645։*

*** *Անհայտ ժամանակագիր. Սամ. Անեցի. 169։ Մեր հիշատակարանների ժողովածուից, դեռ ևս անտիպ. Հաղբատի ձեռագիր 1419 թ.։ Փարիզի ձեռագիր. 1429 թ.։ Փիրղալէմեան. Նոտարք. 57, 59։ Արարատ. 1910. 624։*